## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՀԱՄՕ ԴՇԼՈՒՆԻ.—Ձեր բանաստեղծութիւնները չեն տպուիլ։ Առաջին փորձերը սովորաբար չեն տպագրուում։

ԲԱԼԱԽԱՆԻ. ԱԴԱՄ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ.—«Հազար երանի կուում մեռնողին»ն և «Իմ դարդը» բանաստեղծութիւնները չենք կարող տպել։

ՊԱՐԻԶ. Ա. Զ.—«Միրէյո»ի Առաջին երգը ստացանք և կտպենք յաջորդ անգամ։ Այդ մասին Ձեզ նամակ կգրենք։

ԵՐԵՒԱՆ. Դիտող—Խնդրում ենք գրեցէք միայն փաստեր և իրողութիւններ, որքան կարելի է համառօտ, որովհետև ընթերցողին կարող են հետաքրքրել իսկական փաստերը և ոչ դատողութիւններ։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Պ. Մոճուռեան. «Մամիկոնեան առիւծը» ստացանք։ Հետևանքի մասին Ձեզ կյայտնենք։

ՇՈՒՇԻ. Ց. Խանլարեան.—«Նաւակը» չկարողացանք տպել։

ԹԻՖԼԻՍ. Ոչ-դիպլոմաւոր.—խմբագրութիւնը որոշեց Ձեր յօդուածը տպել միմիայն Ձեր իսկական ստորագրութեամբ։

ԹԵՀՐԱՆ. Վահան Ազատեան։ Տօլստոյի «Կանանց» յօդուածի թարգմանութիւնը ստացանք. ցանկալի էր, որ գրէք մեզ Պարսկահայոց կեանքից։

ԲԱԳՈՒ. Վ. Փ. Ստացանք «Նապօլեական Ռոմէօ և Ջուլիէտա» պատկերը. կպենք։ Պատահական յօդուածները չեն վարձատրուում։

ԹԻՖԼԻՍ. Հ. Տ.-Ա.· Ձեր «Ս. Հախումեանի ինքնակենսագրութիւնը» յօդուածը ստացանք և կտպենք մանր յապաւումներով։

ԱԲԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ. Բ. Մ.-Զ.—Տէննիսընի «In memoriam» պոէման ստացանք. տպագրութեան հանգամանքների մասին Ձեզ կը գրենք։

ԱԽԼՑԽԱ. Ս. Վ. Ձեր նամակից կօգտուենք։

---

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՑ Ա. ՌԱՖ. ԱՂԱՆԵԱՆՑ